№ 268 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7 № 268

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՑ **1907** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տան և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տան ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բաղարտայա և Բաթօնսկայա փողոցների անկիւնը)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայարաններն ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ!!

Շուտով կը հրատարակվեն ընտրողների ցուցակները Պետական Դումայի համար։ Ամեն մի անձն, ով ընտրութեան իրաւունք և ցեղ ունի, պէտք է հետաքրքրուի իմանալու համար, արդեօք մացրված է իր անունը ցուցակների մէջ և եթէ չէ մացրած, աշխատէ ուղղել տալ սխալը և մացնել տալ իր անունը, որ չը զրկվի ձայն տալու իրաւունքից պատուիրակների ընտրութեան ժամանակ։ Ցուցակների հրատարակութեան օրից 2 շաբաթ ժամանակամիջոց է տրվում յայտարարութիւն տալու համար, որ սխալն ուղղեն։ ա. օ. մ. 2—10

Կիրակի, դեկտեմբերի 10-ին, առաւօտեան ժամը 11-ին, նշանակված է արտիստական շինութեան մէջ

Հայոց Դրամատիկական Ընկերութեան

Ընդհանուր արտակարգ ժողով

Զբաղմունքների առարկաները.
1) Հանգուցեալ դերասան Պետրոսեանի ընտանիքն ապահովելու խնդիր.
2) Դրամատիկական ակումբի մասին զեկուցում.
3) Հայկական թատրոնի պատմութիւն կազմելու խնդիր.
4) Դերասան Թուրեանին մահարձան կանգնելու խնդիր.
5) Հալաբարի թատրոնում ներկայացումները շարունակելու կամ վերջացնելու խնդիր.
6) Դրամատիկական ընկերութեան ֆինանսական դրութեան հարց.

(2. 7. 10.) առ. 2—3

Թիֆլիսի Արտիստիկական Ընկերութեան զանգվածում

դեկտեմբերի 10-ին կը կայանայ

ՀԱՄԵՐԳ

Յօգուտ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան

Կը մասնակցեն՝ տ. տ. Մ. Սվէտաղէ, Ղորդանեան, Սիրանոյշ, Ն. Սապարովա-Շերբուեվա, պ.պ. Բիլդրէյէն, Զ. Կօզան, Ս. Քափանակեան, Ուշուրաձէ և Բ. Շերբուեվ։

Կը լինի վիճակախաղ և եւրօպական պարեր

Մուտքի տոմսակն արժէ 2 ր. 20 կոպէկ

Ուսանողները վճարում են 50 կոպէկ

Տոմսակները նախօրօք կարելի է ստանալ ընկերութեան արհեստանոցում մինչև ցերեկվայ ժամը 3-ը. Դանօվսկայա № 19-ը։

2—3

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալեքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ԲՈՒԴԷՆՈՎ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.
Բժ. Ֆ. Վ. ԶՈՒՌՆՕՎԱԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.
Բժ. Մ. Ի. ԵԱՆԶԷՎԱԿԻ.—Ականջի, քթի և բերանի, չորեքշ., ուրբ., կիր. 2—3 ժ.
Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՈՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.
Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՏՈՎ.—Քթի, բերանի և ականջի, երկուշաբ. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.
Բժ. Վ. Գ. ԲՈՅՕՎՍԿԻ.—Ներքին հիւանդով ամենայն օր 4—5 ժ.
Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներական, ամենայն օր 1—2 ժ.
Բժ. Պ. Ի. ԻՆԱԵՎ.—Ներքին, 1—2 ժ. երեքշ., չորեքշ., շաբ., կիրակի, կանացի երկուշաբթի, հինգշ., 1—2 ժ., ուրբ. 12—1 ժ.
Բժ. Ա. Ա. ՄՈՆՍԷ.—Ներքին, երեխ. երեքշ., հինգշ. շաբ. 4—5 ժ.
Բժ. Ա. Տ. ԲՈԶՄԱԻՍԿԻ.—Երեխ., չորեքշ., շաբ. 11—12 ժ. երկ., ուրբ. 1—2 ժ.
Բժ. Ն. Ի. ՆԵՌՈՒՑՄԻՆ.—Ականջի, երկ., երեքշ., չորս., ուրբ.. շաբ., 11—12 ժ.
Բժ. Ա. Ա. ՆՈՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., չորս., կիր. 12—1 ժ., երեքշ., ուրբ. 1—2 ժ.
Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՈՐՈՎ.—Ատամի հիւ. 11—1 ժ. ամենայն օր.
Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ
Բժ. Կ. Ի. ԶՈՒՌՆՕՎՍԿԻ } Կլինիքական անալիզ
Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՈ.—Բժշկ. գիմն. մասաժ, եղէքտր. 4—6 ժամ.

Մ. Ե. ԳՕՐՕԳՅՕՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.
Ս. ԵԱ. ՊԱՒԼՕՎԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.
Վ. Ի. ԻՆՍԵԿ.—Ներքին, 11—1 ժ. երկ., երեք., չորեք., ուրբ., կամանց 1—2 ժ. հինգշ., շաբաթ., կիրակի։

Բժշկական խորհուրդները, մասաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնոզել, ատամների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան։

առ՝ (ա. օ.) 18—144

ՀԱՒԱԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՕՆ

Շաբաթ, դեկտեմբերի 9-ին

Հ. Սանթուրեանը

Մի խումբ երիտասարդների խնդիրքով կը ներկայացնէ

I

Բաղդասար Աղբար

կօմ. 3 գործ. հեղ. Պարոնեանի

II

ՍՕՆԱՅԻ ՆՇԱՆԴՐԷՔԸ

Պ Ա Ր Ե Ր Ո Վ

զօդ. 1 գործ. հեղ. Եսայեանի

Բարեհաճ մասնակցութեամբ դերասանների և Հալաբարի թատերասիրաց նորակազմ խմբի

Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին

Տեղերի գները 2 ր. 10 կ., մինչև 20 կոպ.։

(հ. ու. շ.) 1—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մինչև յունվարի 12-ը. Վերջին տեղեկութիւններ. Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը. Դպրոցներում. Մամուլ. Մաքեր և փաստեր. Դրադարան-ընթերցարան Գօրիում. Մենք անտարբեր ենք. Ներկայացուցչական ժողով. Էջմիածնում կատարված դէպքերի առթիւ. Ժամանակից բարքերից. Տեղեկութիւններ գաւառից. Նամակ Նոր-Բայազէտից. Արարական ապստամբութեան շուրջը. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՄԻՆՉԵՒ ՅՈՒՆՎԱՐԻ 12-Ը

I

«Մշակի» երեկվայ համարում մենք զետեղեցինք պաշտօնական մի հեռագիր Պետական Դումայի ընտրութիւնների մասին։

Այդ ընտրութիւնները տեղի կունենան յունվարի 12-ից յետոյ, իսկ մինչև այդ ժամանակը պէտք է պատրաստ լինեն բոլոր անհրաժեշտ ցուցակները և կատարված լինեն նախնական գործողութիւնները։

Ներքին գործերի մինիստրը այդ հեռագրով լուծվում է և այն հարցը, որ մի քանի շաբաթ է ինչ խօսակցութեան առարկայ է հասարակութեան մէջ Պետական Դումայի ընտրութիւնների յետաձգման մասին։

Ընտրութիւնները չեն յետաձգվում։ Պատուիրակները պէտք է դիմեն ընտրութիւններին յունվարի 12-ից սկսած և վերջացած լինեն պատուիրակների ընտրութիւնները մինչև փետրվարի 5-ը, իսկ այնուհետև պէտք է տեղի ունենան պատուիրակների համագումարները Պետական Դումայի անդամներ ընտրելու համար։

Այս են ասում հեռագրական տեղեկութիւնները։

II

Ներքին գործերի մինիստրը չէ յիշատակում Կովկասը և Լեհաստանը, բայց պէտք է ենթադրել, որ այդ երկու երկիրներում էլ ընտրութիւնները տեղի կունենան նոյն ժամանակամիջոցներում, որոնք սահմանված են ամբողջ Ռուսաստանի համար։

Կովկասի համար յատուկ ծանուցումներ կանվեն անշուշտ Կովկասեան Փոխարքայի կողմից ամենակարճ միջոցում։ Կովկասեան ընտրողական ցուցակների կազմվելը աւելի վատ և աւելի դանդաղ չէ գնում, քան Ռուսաստանի միւս մասերում։ Կովկասը այդ կողմից բացառութիւն չէ կազմում։ Ուստի և ընտրութիւնները, երևի, չեն ուշանայ մեզանում և մենք ականատես չենք լինի այն անպատեհութեան, որ տեղի ունեցաւ անցեալ տարի, երբ կովկասեան ընտրութիւները շատ ուշ հասան Պետերբուրգ և մի քանիսը այցելեցին միայն մի քանի նիստ։

Այս տարվայ ընտրողական գործերը ձևական տեսակէտով համեմատաբար աւելի լաւ դրութեան մէջ են, որովհետև անցեալ տարվայ փորձը որոշ ցուցումներ է տալիս ներկայի համար և հարթել է ճանապարհը մի որոշ ատիճանով։

III

Ուրեմն մեր առաջ աւելի քան մի ամիս ժամանակ կայ գործելու ընտրութիւնների համար։

Անկասկած՝ մենք այժմ զգալի կերպով չենք կարող ազդել ընտրողների ցուցակների լրացման վրա, որովհետև անցել է այն ժամանակամիջոցը, որ տրված էր ընտրողական իրաւունքների մասին յայտարարութիւններ անելու համար։ Բայց ամենաւոր լրացումներ կարելի է անել, եթէ ցուցակների մէջ սպրդել են սխալներ և բաց են թողված անուններ, որոնք անպատճառ պէտք է մուծված լինէին ցուցակների մէջ, օրինակ, եթէ ընակարանային հարկ տվողնե,ի ցուցակի մէջ տեղի են ունեցել ակներև սխալներ։

Իսկ այնուհետև ապագայ ընտրողների ամենամեծ և եռանդուն աշխատանքը պէտք է կենտրոնացած լինի քաղաքական համախմբումների գործունէութեան զարգացման և ընտրեալների ցուցակներ կազմելու գործողութեան վրա։

Կուսակցութիւնների պայքարը կը դառնայ հասարակութեան հետաքրքրութեան գլխաւոր առարկան։

IՎ

Քաղաքական կուսակցութիւնների պայքարը առաջ կը բերէ ծրագրերի և քաղաքական դաւանանքների մի շարք քննութիւններ։

Մեր հասարակութիւնը պէտք է զբաղվէ այդ քննութիւններով։ Եւ դա է քաղաքական կեանքի թէ առանձնայատկութիւններից և թէ արժանիքներից մէկը։

Ժողովուրդը, ուղղորդելով Պետական Դումա իր պատգամաւորներին, իր առաջ ունի երկու նկատում։ Մի կողմից նա ցանկանում է, որ իր պատգամաւորը պատկանէ այն դաւանանքին, որ կարող է բաւարարութիւն տալ կենսական մի շարք խոշոր խնդիրների լուծման, իսկ միւս կողմից, որ պատգամաւորը պատրաստ և վստահելի անձ լինի, որպէսզի կարողանայ հարազատ ներկայացուցիչը լինել իր ընտրողների և արտայայտող երկրի շահերի։

Քաղաքական պայքարը պահանջում է ձեզնից գիտակցական գործունէութիւն և դրդում է ձեզ բռնել որոշ դիրքեր հրապարակի վրա դրած պետական խնդիրների վերաբերութեամբ։ Պատասխանեցէք։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թէհրան, 4 հոկտեմբերի.

Տեղս ժամանեց գահաժառանգը և անմիջապէս երկար տեսակցութիւն ունեցաւ հօր հետ, որի պատճառով և իշաւ։ Ազգաբնակութիւնը ընդունեց նրան ցնծութեամբ։

(«Հեռ. Գործ.»)

Բաթում, 5 դեկտեմբերի

Երբ Փոխարքան այցելեց տեղիս հայոց եկեղեցին, երէցփոխ Դանիէլեանը, մատուցելով աղ ու հաց, արտասանեց հետեւեալ ճառը.«Ձերդ Պայծառափայլութիւն. հայոց եկեղեցու ծխականների կողմից բախտ ունեմ ողջունել Ձերդ Պայծառափայլութեանը, որպէս Կովկասի բարձրագոյն իշխանութեան ամենաարժանաւոր և արդարադատ ներկայացուցչի, որը իր բարձր միջամտութեամբ վերականգնեց հայ եկեղեցու անարդարացի ոտնահարված իրաւունքները։ Բարեհաճեցէք աղ ու հաց ընդունել ռուսաց մեծ ընտանիքի կրտսեր որդիներից։ Բարի լինի Ձեր գալուստը»։

Դրիգորեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—Քաղաքային դումայի ընտրութիւնների համար կանոններ մշակող յատուկ գործավոր մարմինը շտապով վերջացնում է իր աշխատանքները, որոնց արդիւնքը մտադիր են յայտարարել դեկտեմբերի 1-ին։ Կանոնադրութեան ընագիրը արմատական կերպով փոփոխութեան է ենթարկվել կառավարիչ սենատէական բացատրութեան շնորհիւ։ («Страна»)

—Պետական Դումայի ընտրութիւնները ղեկավարող քաղաքային գլխաւոնակը վերջացրել է գիւղացիների և ֆաբրիկների բանւորական ցուցակների հաշուելը։ Տեղեկութիւններ տուել են 27,000 բանւորների մասին. այդ թուից մօտ 6,000 հոգի մացրված են Պետերբուրգի քաղաքացիների ընտրողական ցուցակի մէջ (ընակարանային ցենզով), և այժմ նրանք պէտք է դուրս հանվեն ցուցակներից։

—Դեկտեմբերի 1-ին տեղի է ունենալու կառավարիչ սենատի առաջին դեպարտամենտի նիստը՝ քննելու ընտրողական օրէնքների մէջ նոր սահմանափակումներ մտցնելու հարցը, որոնք առաջարկված են ներքին գործերի մինիստրի կողմից։ («Р. В.»)

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Զինուորական բժշկական ճեմարանի պրոֆեսսորների կոնֆերենցիայում, նոյեմբերի 26-ին, ի միջի այլոց, հարց է յարուցվել աւագների խորհուրդը օրինականացնելու մասին, իբրև ճեմարանի ուսանողութեան ներկայացուցիչ մարմին։ Պրոֆեսսորների մեծամասը կողմնակից է այդ հարցի դրական լուծմանը, և որը, հաւանական է, այդպիսի լուծումն էլ կը ստանայ։ Նոյեմբերի 27-ին ճեմարանի կառավարիչը զեկուցել է զինուորական մինիստրին կոնֆերենցիայի խորհրդակցութեան հետևանքի, նոյնպէս և սեղանատան բացման մասին։ Կարծում են, որ վերջինս մօտ օրերս կը բացվի։ Զը նայելով զինուորական բժշկական ճեմարանի վարչութեան կողմից ձեռք առնված միջոցներին, ուսանողական աւագների խորհրդի ընտրութիւները բայց և այնպէս կայացան։ Ընտրված են 14 աւագներ, 6 սօցիալ-դեմօկրատ, 4 սօցիալ-յեղափոխական և 4 սահմանադիր-ռամկավարներ։ Ճեմարանի 800 ուսանողներից ընտրութիւններին մասնակցել են 500 հոգի։ Ակադեմիստները և անկուսակցականները ձեռնպահ են մնացել։

—Նոյեմբերի 22-ի գիշերը, ժամուրա-պէս ժամի 3-ին, խուզակութեան ենթարկվեց Կազանի համալսարանը։

Այն ժամանակ, երբ ոստիկանների ժողովում ուսանողական պարահանդէս էր տեղի ունենում, համալսարանական բակն է մտնում ոստիկանապետ Վասիլիէվը, առաջին մասի պրիստաւի ու մի քանի օկօլօդօչնիների հետ, 4—5 գօրոդօվօյների ուղեկցութեամբ։

Ոստիկանապետը նախ մտնում է բէկաորի ընակարանը և բացատրում իր գիշերային այցելութեան նպատակը, որից յետոյ բէկաորը, ոստիկանապետը և պրիստաւը, «Raз. Веч.» լրագրի ասելով, մտնում են համալսարանի նոր շինութիւնը, դրան առաջ թողնելով գօրոդօվօյներին և օկօլոդօչնիներին։

Խուզարկութիւնը կատարում են միայն 9-րդ լսարանում, որը գտնվում է ընակարանի առաջին յարկում և, բէկաորի կարգադրութեամբ, յատկացված է ուսանողական խորհրդին իբրև դրասենեակ։ Կազանի նահանգապետը դեռ մի շաբաթ առաջ պաշտօնապէս հարցրել է բէկաորին, թէ ինչ կայ այդ լսարանում և ինչու համար է նա շարունակ փակված պահվում։

Խուզարկութիւնը եղել է կարճատև։ Ոստիկանապետը ուշադրութեամբ աչքի անցնելով խորհրդի արխիվում գտնվող աւագների խորհրդի բոլոր թղթերն ու գրութիւնները՝ վերցրել է նրանց և գեկտոփիլը ու տարել իր հետ։

Խուզարկութիւնը կապ ունի աւագների խորհրդի անդամներից մէկի կալանաւորութեան հետ, որ կատարվել է նոյեմբերի 20-ին, որին խուզարկելիս ի միջի այլոց գտել են այդ լսարանի բանալիները։ («Страна»)

—Խարկովից «Р. В.» լրագրին հաղորդում են, որ նոյեմբերի 23-ին նահանգական դատարանում առանց երդուեալների մասնակցութեան քննվել է Խարկովի սեխնօլօգիական ինստիտուտի մի խումբ ուսանողների գործը, որոնք մեղադրվում էին նրա համար, որ ընդունել են 1906 թւի հոկտ. 23-ի ուսանողական ընդհանուր ժողովի վճիռը՝ ինստիտուտի պրոֆեսսոր Ալբիցկու դէմ բօյկոտ անելու մասին։ Կենտրօնական մարմնի հոկտեմբերի 24-ի նիստում որոշել էին իրագործել այդ բօյկոտը։

Այդ վերջին որոշումը իրագործելու նպատակով էլ մի խումբ ուսանողներ մտնում են կոնֆերենցիայի դահլիճը և պահանջում հեռացնել պրոֆ. Ալբիցկուն։ Ու դադրեցնել մասնաժողովի զբաղմունքները։ Այդպիսով նրանք տրել են մասնաժողովի անդամներին և ինստիտուտի դիրեկտոր պրոֆ. Մուխաչէվին հրաժարվել իրանց ծառայութեան պարտականութիւնները կատարելուց և հեռանալ։

Գործի քննութիւնից պարզվել է, որ պրոֆ. Ալբիցկին մտել է ռուս ժողովրդի ժողովարանի ակտիվ անդամների շարքերը, և դա էլ պատճառ է եղել ուսանողութեան ընդհանուր ժողովին սեպտեմբերի 28-ին մի այսպիսի բանաձև ընդունելու նրա վերաբերմամբ. «Գնահատութեան չառնելով պրոֆ. Ալբիցկու գիտական արժանաւորութիւնները և, հետևապէս, ոչինչ չունենալով ուսումնարանական մարմնի կօմպետենցիայի դէմ, մենք անթոյլատրելի ենք համարում բարձրագոյն դպրոցում մի այնպիսի պրոֆեսսորի ներկայութիւնը, որ պատկանում է մարդատեացների կուսակցութեան ակտիվ անդամների թւին, ինչպիսին է ռուսաց ժողովարանը, և կրկնում ենք մեր պահանջը ուսումնարանի մարմնից՝ հեռացնել ինստիտուտից պրոֆ. Ալբիցկուն»։ Ահա այդ որոշումը պէտք է իրագործէր, պէտք է արտայայտէր կենտրօնական մարմինը, որ բաղկացած էր 15 հոգուց, որը և նոյեմբերի 23-ին նստած էր մեղադրեալների նստարանի վրա։ Վկաների հարցաքննութիւնը հաստատել է, որ նա, արդարև, պատկանում է ռուս ժողովրդի ժողովարանին, բացի դրանից պարզվել է և այն, որ պրոֆ. Ալբիցկին մասնաժողովի նիստին մասնակցելու գնալով իր հետ վերցրել է և իր երկու որդիներին, իբրև թիկնապահներ ուսանողներին բռնութիւնների դէմ պաշտպանվելու համար։ Քննութիւնը հաստատել է, որ բօյկոտը գործադրվել է միայն նրանով, որ նրա դասախօսութիւններին չէին յաճախում, որովհետև կենտրօնական մարմինը առաջարկել է ուսանողներին բռնութիւնների չը դիմել։

Դատարանին ներկայացած 13 ուսանողներից 3-ը դատապարտված են 25 բանտարկութեան, իսկ միւսները արդար են ճանաչվել։ Մեղադրեալներին, ի միջի այլոց, պաշտպանում են եղել և Կուլիկովը, Պերեվերզվը և Բուլգակովը։ Դատի ժամանակ դատարանի շինութեան շուրջը մեծ բազմութիւն էր խռնված, ոստիկանների ու պահակների թիւը կրկնապատկված էր, իսկ դատարանում զինուորներ էին կանգնեցրած։

ՄԱՄՈՒԼ

«Страна» լրագիրը, խօսելով Թուրքական «Դեմոկրատ» («Ինքնապաշպանութիւն») կուսակցութեան հրատարակած այն պրօկլամացիայի մասին, որով յայտարարվել էր, թէ Գանձակի նախկին ժամանակաւոր գեներալ-նահանգապետ Գիւլչչապօվի դէմ կատարված մահափորձը ինքն է կատարել, նրա գործողութիւնների համար, իր կողմից հետևեալ խորհրդածութիւններն է անում.

Ինչի՞ մէջ են կայացել գեներալ Գիւլչչապօվի գործողութիւնները։

Նշանակվելով մայիսին գեներալ-նահանգապետ, Գիւլչչապօվը առաջին ժամանակ ընկվեց Շուշի քաղաքի թուրքական մամասում։ Սակայն նա շուտով համոզվեց, որ յարձակումների նախաձեռնողները և թշնամութիւն վերսկսողները հանդիսանում են գլխաւորապէս միայն թուրքերը։ Այդ ստիպեց գեներալին նրանց դէմ պատժողական միջոցների դիմել և այդ միջոցները գործադրել նաև Գանձակի նահանգում, ուր գործում էին թուրքական բազմաթիւ ասազական հրոսակախմբեր։

Այն ժամանակ գեներալ Գիւլչչապօվի դէմ կանգնեց ամբողջ թուրքական լոյալ բուրժուազիան։ Այս վերջինի հետ իր նախկին գործողութիւններով կապված կովկասեան ադմինիստրացիան չէր կարող ուշադրութիւն չը դարձնել գեներալ Գիւլչչապօվի դէմ եղած արշաւանքի վրա, որը, ճշգիւ կատարելով պատժողական հրամանները, ազգաբնակութիւնը անդորրացնելու նպատակով ուղղեց իր գործունէութիւնը խռովութիւնների իսկական յանցաւորների դէմ, ի նկատի չառնելով որ այդ յանցաւորները խօսքով միշտ վկայել են կառավարութեան առաջ իրանց անձնուրիրութիւնը և պատրաստակամութիւնը՝ աջակցել նրան կուսակցութեան հայերի այն մասայի դէմ, որ յեղափոխականապէս է տրամադրված։

Գեն. Գիւլչչապօվին հեռացրին գեներալ նահանգապետութեան պաշտօնից և տուին նրան իր նախկին պաշտօնը։ Նրա տեղ նշանակվեց գեն. Բաուէրը, որը, ուշադրութիւն չը դարձնելով այն բանի վրա որ թուրք ժողովուրդը ամբողջովին սպառազինված է, իր պաշտօնավարութեան առաջին օրերում աքսորեց Գանձակից երեք հայ քահանաներ, գտնելով նրանց մօտ ինքնապաշպանութեան համար անհրաժեշտ զէնք։

Այդպիսով վարչութեան թուլութիւնը, պրինցիպների երերումն, անգործունէութիւնը մի ուղղութեամբ և աթառարդ խրատութիւն՝ մի ուրիշ ուղղութեամբ՝ հանդիսանում են սպառնալիք Կովկասի ապագայ անդորրութեան։

*

Սուլթանի արտայայտած այն հանճարաւոր մտքի առիթով, թէ հարկաւոր է թեթևացնել հրէաների վիճակը, որպէսզի դրանով անիշխանականութեան և յեղափոխութեան առաջն առնվի, «Der Traind» նկատում է.

«Մենք պահանջում ենք մարդկային իրաւունքներ ոչ թէ նրա համար, որ իրաւազրկութիւնը տանում է մեզ մասային յեղափոխութեան և անիշխանականութեան գիրկը, ոչ թէ նրա համար, որ լիակատար իրաւունքներ ունեցող քաղաքացիների դերում մենք օգտակար կը լինինք հայրենիքին։ Մենք պահանջում ենք մարդկային իրաւունքներ, որովհետև մենք մարդիկ ենք, որովհետև իրաւազրկի վիճակում մենք այլ ևս չենք կարող ապրել, որովհետև մենք ուզում ենք ապրել ոչ միայն ուրիշների համար, այլ և մեզ համար։

«Երկար ժամանակ մեր մինիստրները կրկնում էին, որ հրէաներին չի կարելի իրաւունքներ տալ ուղղափառ ազգաբնակութիւնը նրանց շահագործութիւնից ազատելու նպատակով, բայց Վիտտէին վիճակվեց առաջինը անել այն հանձնարարը եղբայակցութիւնը, որ հրէաները պէտք է զրկված լինեն իրաւունքներից հէնց իրանց սեփական բարեկեցութեան շահերի տեսակէտից։

«Մենք ողորմութիւն չենք ուզում այն բիւրօկրատիայից, որի կամքը՝ բռնութիւն է ու կամայականութիւնը, իսկ օրէնքները՝ ապօրինութիւն։ Մենք սատկ ենք մեր իրաւունքները ժողովրդական ներկայացուցիչների մաքուր ձեռքերից, որոնց կամքը՝ օրէնք է և արդարութիւն»։

*

Բաքւում Թուրքերէն լեզուով հրատարակվող «Իրշադ» լրագիրը գտնվում է ֆինանսական ճգնաժամի մէջ։ Ինչպէս երևում է, այդ վիճակը անհնարին է դարձնում թերթի հրատարակութիւնը, և կիրակնօրեայ համարում խմբագրութեան և նրա աշխատակիցների անունից մի կոչ է ուղղված «բոլոր մուսուլմաններին»։

Այդ կոչի մէջ ասված է, որ, մինչև ստութեան պատճառով գուցէ լրագիրը ստիպված լինի դադրեցնել իր հրատարակութիւնը։ «Մի ինչնաւոր մուսուլման մասսան լինելով ազէտ, անծայր խաւարի մէջ տալիս է լրագիրն միայն մօտ 2500 բաժանորդներ, իսկ ով ծանօթ է լրագրական գործին, նա գիտէ որ դրանով լրագիրը չի կարող գոյութիւն պահպանել, մանաւանդ մուսուլմանական։ Մինչև այժմ լրագիրը միայն վնաս էր ունենում, և հրատարակիչը ծախսել է նրա վրա 30,000 ռուբլի»։

Նոյն կոչի մէջ «Իրշադի» խմբագիրը ասում է. եթէ լրագիրը դադարում է այն պատճառով, որ ինքը գործը տանել չէ կարողանում, այն ժամանակ նա մեծ ուրախութեամբ կը զիջէ իր տեղը մի ուրիշ, աւելի համապատասխան անձի, միայն թէ լրագիրը իր գոյութիւնը պահպանէ և զեկավարվի պրօգրեսսիվ ուղղութեամբ։

Խօսելով այդ մասին «Баку» լրագրի աշխատակից Խադիմը նկատում է.

«Ես չեմ ասիլ, որ անպատճառաբեր է ու ամօթ մուսուլմանների համար, եթէ մուսուլմանական վերջին պրօգրեսսիվ լրագիրը փակվելու լինի, բայց դա ամօթաբեր է մուսուլման ինտելիգենցիայի համար։

«Մի՞թէ զուր, պ. պ. ինտելիգենտներ կամ ձեզ ինտելիգենտ համարողներ, չէ՞ք կարող աջակցութիւն ցոյց տալ լրագրին։

«Մի՞թէ միլիոնաւոր մասսայի մէջ չը կան 5000 հոգի լրագիր կարդացող ինտելիգենտներ։

«Իւրաքանչիւր մուսուլմանի պարտականութիւնն է չը թոյլ տալ, որ մեռնէ լրագիրը, որովհետև «Իրշադի» մահից յետոյ ոչ մի մարդ չի համարձակվիլ այլ ևս մուսուլմանական լրագիր հրատարակելու, և դրանից յետոյ ամօթ կը լինի ձեզ համար, մուսուլման «ինտելիգենտներ»։

*

Դեկտեմբերի 3-ին կայացած խորհրդակցութիւնը էջմիածնի դէպքերի մասին՝ սաստիկ զայրացել է «Երկրի» զեկավարներին և ոմն Վահէ, պաշտպան հանդիսանալով էջմիածնին և նրա այժմեան զեկավարներին, գտնում է, որ ոչ ոք իրաւունք չունի դատաւոր դառնալ էջմիածնի գլխին, որ դատաւոր և քննիչ կարող է լինել միայն ժողովրդական ներկայացուցչութիւնը, օրինակ՝ կենտրօնական ժողովը (իսկ դաշնակցականների ժողովը). անցողակի պ. Վահէն չէ զլանում կրկնել «երկրայիններին» յայտնի ստորաքարշ զրպարտութիւնը, թէ կենտրօնական ժողովը փակվեց ժշական-կղերական բանակի և կառավարութեան ներդաշնակ ջանքերով։ Ի վերջոյ «Երկիրը» միանգամայն աւելորդ է գտնում քննութիւնը, որովհետև 1) իբր թէ խնդիրը պարզված է անաչառ ժամուլի էջերում, մոռանալով որ հէնց այդ անաչառ մամուլը, բացի, ի հարկէ, «Երկրից», անհրաժեշտ է գտել քննութիւնը, 2) քննութեան վարոց ձեռնարկել է մի մասնաժողով, բաղկացած Լէօ, Աբեղեան և Յ. Գրիգորեան պարոններից։ Այս առարկութիւները, ի հարկէ, ոչ մի կրիտիկայի չեն դիմանում։ Թէ «Երկիրը» հէնց առաջին օրից աշխատեց թագցնել հշմարտութիւնը, արդարացնել խուժանապետներին, այդ հանրածանօթ իրողութիւն է։ Նրան, ի հարկէ, ձեռնտու չէ քննութիւնը։ Նա ժխտում է հասարակական քննութեան գաղափարը, մի բան, որ ընդունված է ամեն տեղ։ Ոչ ոք չէ կամենում դատաւորի դեր կատարել։ հարց է դրված միայն քննութիւն, անաչառ քննու-

թիւն կատարել, իմանալու համար խայտառակ դէպքի շարժառիթները և պարագաները։ Եթէ Լէօ, Արեղան, Գրիգորեան ձեռնհաս են նկատվում քննութիւն կատարելու, ինչու ամբողջ հայ մամուլի և հասարակական-ազգային հաստատութիւնների ներկայացուցիչների ժողովից ընտրված մի մասնաժողով անձնոնհաս է նկատվում այդ քննութեան համար. չէ՞ որ այդ մասնաժողովը անաչառութեան, անկողմնապահութեան աւելի մեծ զրաւականներ է ներկայացնում, քան մի որեէ անհատ։

Բայց մենք այնուհանդերձ դէմ չենք, որ պ. Լէօն էլ քննութիւն կատարէ, որովհետև մեր նպատակը—ճշմարտութիւնը պարզելն է։ Իսկ «Երկիրի» նպատակը—թաքցնելն է։ Եթէ «Երկիրը» հանկարծ մամուլի կոչումը, եթէ նա մամուլը չը դարձնէր թայֆական նեղ ձգտումների արտայայտիչ, նա առաջինը պէտք է ողջունէր հասարակական քննութեան պահանջը և ինքն ևս պէտք է մասնակցէր, ուզարկելով իր ներկայացուցչին։ Բայց նա վախենում է անաչառ քննութիւնից։

ՄՏՔԵՐ ԵՒ ՔԱՏԵՐ

LII

Երբ մի մարդ ուրիշին շիտակութիւն քարոզելու յատկութիւնն ունի, ամենից առաջ ինքը շիտակ պէտք է լինի։

Եւ ես տարված եմ այդ տարրական ճշմարտութիւնը հնչեցնել «Հոսանք» թերթի «Արիմիէդ» անունով յօդուածագրին (№ 10) և ասել շիտակութիւն էք քարոզում, բայց դուք շիտակ չէք, դուք այնպիսի մտքեր էք վերագրում ինձ, որ ես չեմ ունեցել, այնպիսի խօսքեր էք դնում իմ բերանում, որ ես չեմ արտասանել։ Ես ոչ մի տեղ և երբէք այն միտքը չեմ արտայայտել, թէ «հայ ինտելիգենցիան պարտաւոր է անպատճառ պաշտպանել, գօրավիգ հանդիսանալ ու ամուր պահպանել հայ ժողովրդի մէջ տիրացուական ոգին...»։ Դա, դուցէ, ձեր սխալ եզրակացութիւնն է, բայց ձեր եզրակացութիւնը համոզեցուցիչ չէ, որովհետև հայ ժողովուրդը շատ լաւ գիտէ իր երկարամեայ փորձով, վերջին 34-ամեայ պատմութիւնը, որ ամբողջ հայ գրականութեան և մամուլի մէջ «Մշակը» կղերականութեան և տիրացուական ոգու ամենամունդ հաւատոյն է եղել և աշխատել է արմատախիլ անել այդ ոգին հայ ժողովրդի սրտից։

Իմ նախորդ յօդուածի ամբողջ միտքն այն է եղել, որ այլ է կղերականութիւնը, այլ է եկեղեցին, այն ևս հայոց եկեղեցու պէս մի ժողովրդական և դեմոկրատական եկեղեցի, որ վաղամայ է քարոզել եկեղեցին ընդելու գաղափարը, որովհետև եթէ նա դեռ չէ ջնջվում մեղանից աւելի կրթված և լուսաւոր ազգերի կեանքից, ևս առաւել նա չէ կարող ջնջվել մեր կեանքից, այլ ընդհանրապէս, բարեկարգվելու, զրկվում աւելի զեմոկրատիկ ձևերի մէջ, նա կարող է օգտակար լինել ժողովրդին, ծառայել նրա շահերին թէ վաղամայ է եկեղեցին ոչնչացնելու միտքը քարոզելը, դա խոսավանց և ինքը «Հոսանքը» իր № 8-ի առաջնորդող յօդուածի մէջ, ուր ասված է. «Մենք կողմնակից չենք եկեղեցին ոչնչացնելու կարծիքին. մի բան չի կարելի ոչնչացնել, եթէ պատմութեան օրենքով ընթացքի կողմից նրան վիճակված չէ կորչելու։ Ուրեմն «Հոսանքը» գտնում է, որ դեռ չէ կարելի տալ եկեղեցին ոչնչացնելու լոզունգը։ Ճիշտ է, նա համարում է եկեղեցին բուրժուական հասարակութեան անհրաժեշտ տարր, և հետևաբար, գտնում է որ նա կարող է անհետանալ միայն այդ հասարակութեան հետ, բայց մենք այլ կարծիքի ենք. մենք գտնում ենք, որ եկեղեցին մի բնական տարր է ամբողջ ժողովրդի համար, որ նա չը պէտք է ամենեին ծառայի բուրժուազիայի շահերին, ինչպէս ներկայումս է. ընդհակառակը, պէտք է այնպէս վերակազմվի նրան, որ նա չ՝ ծառայէ բուրժուազիայի, այլ ամբողջ ժողովրդի, աշխատաւոր մասսայի և պրոլետարիատի շահերին։ Եւ ասացէք խնդրեմ, մթնէ այդպէս չէր քրիստոնէական եկեղեցին իր գոյութեան ն խնամի ֆազիսում. մթնէ եթէ իրագործվէին քրիստոնէական ուսման էութիւնը, նրա իդէալները—հաւասարութիւն ամենքի, ջնջումն դասակարգերի, համայնացումն սեպհականութեան, բոլոր մարդկանց եղբայրութիւն և սէր—մթնէ այդ իդէալները պակաս են սոցիալիզմի քարոզած իդէալներից։

Նորից շեշտենք մեր միտքը. մենք կարծում ենք, այո, որ այլ է կղերականութիւնը, որը մենք դատապարտել և դատապարտում ենք, այլ է եկեղեցին. մենք կարծում ենք, որ եկեղեցին կարող է առանց կղերի և կղերականութեան լինել, և հենց այդ պատճառով էլ համարում ենք Սեդրակեանի պէս եկեղեցականներին, որոնք, կղերական չը դառնալով, եղել են սպասաւորներ մի հասարակութեան, որին նրանք կամեցել են ծառայեցնել յօդուածներով և բարօրութիւն ժողովրդի։ Դուք գտնում էք, որ աբսուրդ է իմ այս միտքը, թէ եկեղեցին կարող է առանց կղերականութեան լինել, որովհետև դուք շփոթում էք «կղերականութիւն» և «հոգևորականութիւն» մտքերը։ Մենք ասում ենք. լաւ, պատրաստված, կրթված, ժողովրդասէր, իսկական քրիստոնէական հայեացքներով տոգորված հոգևորականները, օրինակ, մի Արիստակես Սեդրակեան, մի Ներսէս Աշտարակեցի, մի Ներսէս Վարժապետեան, մի Ներսէս Շնորհալի, մի Մեսրոպ, մի Մաշտոց, կարող են օգտակար լինել ժողովրդին և առհասարակ ծառայութիւններ մատուցանել նրան, մանաւանդ աշխատաւոր մասսային, պրոլետարիատին։ Դուք գտնում էք, որ այդպիսի հոգևորականներին էլ վնասակար են, որովհետև, ձեր կարծիքով, նրանք կղերական են, որովհետև եկեղեցի և կղերականութիւն անբաժան գաղափարներ են։ Դուցէ ես սխալ եմ. դուցէ հիշը դուք էք ասում, բայց ասել՝ թէ իմ քարոզածը աբսուրդ է, ձերը անտասան հշմարտութիւն—դա, ամենաքիչը, օտարի կարծիքը և համոզմունքը չը յարգելու կոյր մոլեռանդութիւն է։ Դուք ինձ ապացուցէք, որ բարեկարգված, բարեփոխված, դեմոկրատացված քրիստոնէական եկեղեցին դարձեալ կը մնայ բուրժուազիայի շահերի պաշտպան, չի ծառայի ժողովրդի, աշխատաւորների շահերին, այն ժամանակ դուցէ ես ինքս համաձայնվեմ ձեզ հետ, որ այո, եկեղեցին պէտք չէ, որ նա վնասակար հասատատութիւն է, բայց քանի որ այդ դեռ չէք ապացուցել, քանի որ ես այն զոր մի պարապմունքի. առանց նիթական շահի, կարդալը ոչ մի արժէք չունի գաւառական աչքում։ Եւ այդ է պատճառը, որ գիւղացին աւելի շատ իր 12 տ. որդուն դէպի Բագու, աշխատանքի է ուղարկում, քան զրաղոց՝ սովորելու։

—Է՞հ, մտածում է նա. դուռս պատում չի, որ շատ կրթցնեմ. քիչ կարդալուց էլ, օգուտ չը կայ. աւելի լաւ է Բագու ուղարկենք երեխին, գնա աշխատանքի ծերը բռնի։

Պարզ է, որ այս օրինակ զաւառացիները, հոգիս թէ համոզվի, որ զրագրան, ընթերցարան էլ մի օգտաւէտ բան է։ Ի՞նչ լաւ է, ասես երբ մարդ ձմեռը քուրսու տակ նստում, մի սիրուն պատմութիւն առաջը դրած կարդում, է իսկ տան խալին էլ լսում են։

Սկզբում, նա ձեզ կասէ, շատ լաւ բան է, բայց քիչ յետոյ, գլուխը շարժելով, ծը՛մ կանի ասելով՝ ոչինչ օգուտ չը կայ զատարկ բան է։

Ցաւերի տակից գլուխ բարձրացնել չէ կարողանում գիւղացին, ինչ հոգ տայ գլխին։

Այժմ Գօրիսը բանա ունի շնորհիւ պ. պ. Ա. Գէորգեանի և Մ. Փարսիեանի զրագրան ընթերցարան ունենալու։ Կառավարութիւնը թոյլ է տուել յիշեալ պարոններին զրագրան ընթերցարան բանալու և նրանք կը փորձեն, թէ մեր գաւառական քաղաքը, որ առաջին օգտվել դիտէ զրագ.-ընթերցարանից։ Եւ եթէ առաջին տարում ժողովրդի կողմից սէր, համակրանք երևայ դէպի այդ զեղեցիկ հիմարութիւնը, այդ մեծ խրախուսանք կը լինի ձեռնարկողներին, աւելի լայն և ընդարձակ ծաւալ տալու գործին։

Մի հիմարութիւն, որից օգտվել կարող են ամեն գաւառացի մարդիկ, վաճառական, զօրվակաս, ուսուցիչ, պաշտօնեաներ, քահանաներ և այլն, այդ միակ զրագ. ընթերցարանն է, իր զեղեցիկ արդիւնաւոր ազդայով։

Ողջունում ենք Գօրիսի «Մատենական զրագ.-ընթերցարան» բացումը և ցանկանում զեղեցիկ ապագա։ Յուսանք, որ մեր քաղաքացիք սեկնեան կը լինեն այդ անմեան հիմնարկութեան յարատևութեանը թե—թիկունք տալով և աւելի պայծառ ընթացք կը տան մեր պաշտելի Մատեան—անուան հետ կապած, նրա յիշատակին ընծայաբերված այս հիմարկութեան։

Աջողութիւն ենք ցանկանում։

Սաղանդարեան

ՄԵՆՔ ԱՆՏԱՐԵՐԵՐ ԵՆՔ

Անդորձ կեանքը յանցանք է։
Գեղարուեստից զուրկ աշխատալից
Իեանքը վայելչացումն է։
Գօն Բօսկին

Գեղարուեստը և քաղաքակրթութիւնը մարդկութեան պարծանքն են։ Չը կայ մի քաղաքակրթված երկիր, որ չունենայ գեղարուեստ, և չը կայ մի երկիր, որ ունենայ գեղարուեստ և չունենայ քաղաքակրթութիւն։ Բարքանչիւր ազգի մատուր զարգացումը հաւասար է իր ունեցած գեղարուեստին, այնպէս որ եթէ կամենանք գիտենալ մի որեէ ազգի մատուր զարգացումը, նրա քաղաքակրթութիւնը, ամենից առաջ պիտի ուսումնասիրէք նրա գեղարուեստը. որչափ բարձր լինի նրա գեղարուեստը, նոյնչափ բարձր կը լինի նրա մատուր զարգացումը, դա մի աքսիօմա է։ Ամեն մի կրթված եւրոպացի ամենից առաջ զվում է իր գեղարուեստը։

Բոլոր հնագարեան ազգերը ունեցել են գեղարուեստ, որ քաջալերվել է կրօնով—թագաւորներով, կեսարներով, Հոմի պապերով, մեկենասներով և այլն... Մեր հայ ազգը ունեցել է նոյնպէս գեղարուեստ, որ թէև մեծ ճոխութեան չի հասել, բայց և այնպէս մեր թագաւորները, իշխանները ու կաթողիկոսները միշտ քաջալերել են գեղարուեստը։ Նրանց քաջալերութեան արդիւնքն է, որ մնացել են մեր որը ազգին իբրև մխիթարութիւն՝ մի քանի աւերակ եկեղեցիներ իրանց գեղեցիկ նարարապետութեամբ և ձեռագիր աւետարաններ՝ իրանց մանրանկարչութեան գեղարուեստով ունենք և ս. Էջմիածին եկեղեցին, որ զարդարված էր ներսը գեղեցիկ ծաղկանկարներով և պատկերներով, իսկ այժմ նկարները պատերից ջնջված են, իսկ ծաղկանկարները քանդված, պատերը սպիտակացրած են գաճով, որ աւելի զօրանցի տպաւորութիւն է թողնում, քան եկեղեցու և այդ երևոյթին մենք միանգամայն անտարբեր ենք, ասում ենք՝ քանդվում է, թող քանդվի։

Մեր հայ ժողովուրդը զուրկ է գեղարուեստից, ուրեմն զուրկ է մատուր կեանքից. ցաւելով եմ արտասանում այս խօսքերը. դա ուրեշ չէ, այլ իրողութիւն է. նոյն ս. Էջմիածինը, որ զարերի ընթացքում պաշտել ենք մինչև այսօր, որը. կենտրոն է հանդիսացել մեր իդէալներին ու մատուր զարգացման, օրօրոց է եղել ամբողջ հայութեան, որ վերջապէս հայ ենք դեռ կոչվում ու հայերէն ենք խօսում, որի շնորհիւ Կարելի է համարձակ ասել՝ երախտապարտ ենք նրան։ Միևնոյն ժամանակ, երբ օտար զիտնականները զբաղվում են հետազօտութեամբ մեր անցեալի (պ. պ. Մառ, Մարժիկօվակի և այլն), մենք մոռանում ենք մեր անցեալը և մեր, մինչդեռ մեռացածին քանդվելու համար կարծես ուրախանում ենք, մեր հինը ատում ենք տկար ենք փոխարինել հինը նորով, ահա մեր կատարեալ անկումը, այո, կեղծ է հայերի ինքնահաւան քաղաքակրթութիւնը. լոկ հայրենասէր ձևանալու պատրուակով օգտվում են ժողովրդից, խաբեայութեամբ իրանց զլուխը պահելու համար ազգի դրամներով։ Հայրենասիրութիւնը կարծում են, մեղր է, որ եթէ շատ ասեն մեղր-մեղր, կարծում են, թէ ազգի բերանը կը քաղցրանայ։ Մեր ազգը գեղարուեստ չէ սիրում, չէ հասկանում և մինչև անդամ աւելորդ է համարում, իսկ աւելորդ է համարում այն պատճառով, որ բարեկիրթ չէ և առհասարակ թերուս է։

Մեր եռանդը սատանային է նուիրվում, այլ ոչ հրեշտակին։

Գեղարուեստը մարդուն ազնւացնում է. անազնիւ է այն մարդը, որը չէ զգանգանում բարին չարից. գեղարուեստը սիրել—կը նշանակէ սիրել գեղեցիկը, սիրել բարին. գեղեցիկը և բարին միևնոյն հասկացողութիւններն են։ այս ապացուցանում է հիանալի կերպով հեղինակաւոր Զօնսկինը. նրա բացատրութիւնները, ինձ համար կարծես աւետարանի խօսքեր լինեն իրանց ճշմարտութեամբ։ Երանի թէ նրա գրքերը թարգմանվէին հայերէն. նրա գրքերը բարոյականութեան գրքեր են։ Գեղարուեստ չը սիրելով մենք մոռանում ենք վայրենի, բարբարոս ժողովուրդներին, որոնք ն-յունպէս գեղարուեստ չունեն։ Վայ այն ազգին, որ չունի գեղարուեստ, գառն է նրա վիճակը, քանի որ չը պիտի կարողանայ մրցել իր մատուր զարգացումով մարդկութեան առաջ։ Եւ եթէ հարցնէք, թէ ինչ են կուլտուրական ազդերը մեզանից սպասում, ի հարկէ կասեմ քաղաքակրթութիւն և գեղարուեստ այլ ոչ զենք ու թերուսութիւն։

Չէ կարելի ասել, որ մեր ազգը չէ արտադրում այդ բարձր պարզևով օժանդակված մարդիկ. չէ, ընդհակառակը, կարող եմ ասել, որ շատ են մեր մէջ քանքարաւոր մարդիկ, բայց ի՞նչ օգուտ, երբ ազգը անտարբեր է դէպի գեղարուեստը. դա մի խոշոր պակասութիւն է։ Շատերը զատնում են յայտնի նկարիչներ պանդխտութեան մէջ և չեն էլ կարողանում իրանց հայրենիքին ծառայել, որովհետև ազգը նրանց չէ ընդունում և չէ գնահատում. (Այվազովսկի, Շահին, Զաքարեան և այլք). այդպիսիները դեռ լաւ է իրանց ուժով կարողանում են գնալ օտարութիւն և գոնէ օտարները նրանց գնահատում են, յաճախ նրանց հայ լինելը չիմանալով. իսկ մեծամասնութիւնը ազգասիրութիւնից չէ կարողանում տեղից շարժվել և կորչում ու անհետանում է։ Իրաւացի էր պ. Փ. Թերլիմէկիանը, որ գրել էր անցեալ օրերումս «Մը.շակ»-ում նկարիչ Տէր-Մինասեանի մահվան համար. թէ մեռաւ և ազգը չեմացաւ թէ ուներ նկարիչ մի նկարիչ, մինչև Պետերբուրգի լրագրները, երբ նա ցուցադրում էր իր պատկերները, բոլորը զոհաբերում ու միաբերան ասում էին, ահա ամենալաւ պատկերը ցուցահանդիսում. ազգը մեռնելու լուրն է ստանում սովորաբար անտարբեր։

Թիֆլիսում ունենք, բայց պետ. ուսումնարանից, որը փակվեց, նաև գեղարուեստական ընկերութիւն, որ զոյութիւն ունի աւելի քան 30 տարի, և որը պահում է մի գեղարուեստական դպրոց։ Այս դպրոցը ունի մի քանի թոշակաւոր ընդունակ աշակերտ. այդ դպրոցում ես պատիւ ունեմ ուսուցիչ լինելու և չեմ կարող անտարբեր լինել դէպի հետևեալ երևոյթը, որ աշակերտներ ենք պատրաստում, մինչև վերջին դասատուները հասնում են, բայց ընկերութիւնը ոչ մի միջոց չունի այդ խեղճերին կատարելագործվելու ուղարկել և այնպէս կորչում են շատ տաղանդներ։ օրինակ այդ ձրի թոշակաւոր աշակերտներից այժմ մի հայ երիտասարդ է՝ Նախիջևանցի Ասաքիեան անունով, որ մեծել է առանց կատարելագործվելու. կարևոր է, որ գնայ կամ արտասահման և կամ Ռուսաստանի մայրաքաղաքները կատարելագործվելու բայց միջոց ամենևին չունի։ Ո՞վ պիտի մտածէ այդպիսիների մասին, եթէ ոչ հայ երիտասարդը։

Բոլորովին այլ կերպով են վերաբերվում վրացիները դէպի իրանց տաղանդները. անցեալ տարի երկուսին ուղարկեցին նոյն ուսումնարանից՝ (Ցիմակուրիձէին և Մեսխիին) Մոսկվա. երկուսն էլ անհամեմատ թոյլ էին Ասաքիանից, բայց երկուսն էլ մրցման քննութեան մէջ յաղթում են, երեսուն քննվողներից առաջինների են ընդունվում և հաւանական է որ վերջ է վերջոյ պետական թոշակներ ևս ստանան։ Եռեղերս չը հասած 25 տարի են ստանում ամսական, թէև քիչ է, բայց ուսումը քաղցր է նրանց համար. այդ պատճառով համակերպվում են։ Մթթէ մեր ունեցած մարդիկ, մեր կրթված դասակարգը վերջի վերջոյ չը պիտի հասկանայ, որ մեզ այժմ գեղարուեստ է պէտք և մարդիկ են պէտք պատրաստվելու մեր կուլտուրական կեանքի համար։ Ցիշեցէք, թէ որչափ ուսանողներ ունէք համալսարաններում, այլ և այլ դպրոցներում թէ արտասահմանում և թէ մայրաքաղաքներում, որոնք թոշակ են ստանում ազգից մեծ մասամբ խնամութեամբ, բարեկամութեամբ. այդ դէպքում բնական է, որ վերադառնում են մինչև անդամ յաճախ օտար լեզուն անդամ չիմանալով. ժամանակն էլ են վատնում, փողն էլ և ապարդիւն մարդիկ են դառնում։ Այդքան ուսանողների թւում մթթէ չէր կարելի մի որոշ տոկոս նկարիչներ պահել, որոնք ժամանակին, ես հաստատած եմ, աւելի օգտակար մարդիկ կը լինէին ազգին, քան այդքան ատանց մրցութեան ուղարկվող ուսանողները։ Ես չեմ կամենում ասել դրանով, թէ ուսանողները աւելորդ են, բնաւ ոչ. այլ շարունակ այդ թոշակները տրվում են անխնայելի, և նրանց որոնք շատ անդամ քէֆ անելու են գնում, այլ ոչ ուսումնասիրելու։ Բանից անդամ ուսաց ինտելիգենցիայից լինձ դիմել են, երեսովս են տուել՝ ասելով, մթթէ կրթված մարդիկ չեն անհայում, որ Ասաքիանների նմանները չեն ուղարկում կատարելագործվելու, թէ կուլտուրական գործ չենք համարում, գոնէ վրացիներից օրինակ վերցնեն։ Տեսէք Նիկոլաձէին, Ցիմակուրիձէին և այլոց, ինչպէս են ուղարկում. իսկ դուք, հայերդ, ոչ մի նկարչի չէք ուղարկել, չէ՞ որ դուք աւելի հարուստ էք, քան վրացիք։ Այդ դէպքում լեզուն պապանձվում է և ոչինչ պատասխանել չեմ կարողանում. զովելի է վրացիների այդ ձգտումը. զովում եմ և ես և ցանկանում եմ, որ մենք էլ հետևենք նրանք բարի օրինակին։

Նկարիչ՝ Ե. Թադէոսեանց

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ

VII

Արդի դեմոկրատիան

